ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018 թ.

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 02/11.5/28768-17 հանձնարարականի՝ ներկայացվում է 2017 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1. Օրենսդրական բարեփոխումներ

1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր:
2. «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
3. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

1.2. Մեթոդական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին

Մշակվել և համայնքներին են տրամադրվել հետևյալ մեթոդական ուղեցույցներն ու ձեռնարկները.

1. Ուղեցույց «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղական վճարների դրույքաչափերի հաշվարկման»,
2. Ձեռնարկ «Միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական ղեկավարների և աշխատակազմերի համար ընթացակարգային աշխատանքների իրականացման»,
3. Մեթոդական ուղեցույց «Բազմաբնակավայր խոշորացված համայնքերում տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմերի գործունեության կազմակերպման»,
4. Մեթոդական ուղեցույց «Համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման»,
5. Մեթոդական ցուցումներ «Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման»,
6. Ուղեցույց «Տնտեսության զարգացումը համայնքներում»,
7. Մեթոդական ուղեցույց «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման»,
8. Ձեռնարկ «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով վարչական ղեկավարների կողմից տրամադրվող ծառայությունների ընթացակարգեր»,
9. Մեթոդական ուղեցույց «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ծրագրային բյուջետավորման»:

1.3. Էլեկտրոնային կառավարում

Միավորված բազմաբնակավայր համայնքներից 6-ում (Մեղրի, Գորայք, Սարապատ, Արփի, Ամասիա, Նոյեմբերյան,) հիմնվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ): Նման գրասենյակների ընդհանուր թիվը 29 է, որոնցից 20-ը՝ միավորված համայնքների կենտրոններում:

Թվով 10 միավորված բազմաբնակավայր համայնքներում (Նոյեմբերյան, Այրում, Կողբ, Տեղ, Ամասիա, Աշոցք, Արփի, Սարապատ, Գորիս, Գորայք) ներդրվել և գործարկվել են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ): Հանրապետության 502 համայնքներից ՀԿՏՀ-ն շահագործվում է մոտ 400-ում, այդ թվում՝ միավորված 18 համայնքներում:

Համայնքի ավագանու նիստերի, ՏԻՄ-երի ասուլիսների և հանրային բնույթի այլ միջոցառումների առցանց հեռարձակումներն համացանցում իրականացնելու հնարավորություն ունեցող համայնքների թիվն ավելացել է 8-ով: Ընդհանուր առմամբ, նման հեռարձակումները կանոնավոր կերպով իրականացվում են մոտ 33 համայնքներում:

1.4. Կազմակերպված համաժողովներ, խորհրդաժողովներ

30.06.2017թ. - «Երկխոսություն տեղական տնտեսական զարգացման շուրջ» թեմայով միջոցառում, որին մասնակցել է ՀՀ վարչապետը:

10.11.2017թ. - Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ Երևանում կայացավ Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում. «Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ» խորագրով համաժողովը: Համաժողովին մասնակցել են ԵԽ տեղական և տարածքային կոնգրեսի նախագահ Գուդրուն Մոսլեր-Թյորնստրյոմը և նրա գլխավորած պատվիրակությունը:

08-09.12.2017թ. - ՀՀ համայնքների խորհրդաժողով Դիլիջան քաղաքում, որին մասնակցել է ՀՀ նախագահը,

1.5. 2017թ. ՀՀ համայնքային բյուջեների սեփական եկամուտների ցուցանիշներ, հողի հարկի և գույքահարկի բազաների վերանայում և ճշգրտում

2017 թվականի ՀՀ համայնքների սեփական եկամուտները գանձապետարան մուտք եղածով կազմել են 38,545.1 մլն դրամ (կատարողականը՝ 100.1%): 2016 թվականի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշն աճել է 11.9 %-ով կամ 4,098.8 մլն դրամով (առանց Երևան քաղաքի աճել է 23.9 %-ով, կամ 3,512.4 մլն դրամով):

2016 թվականի համեմատությամբ սեփական եկամուտները 5 հարկատեսակների մասով աճել են 9.2 %-ով կամ 2,544.6 մլն դրամով (առանց Երևան քաղաքի աճել են 13.3 %-ով կամ 1,675.7 մլն դրամով):

2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1. *Ռազմավարական փաստաթղթեր և բարեփոխումներ*

1. ՀՀ մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններ.
2. 2018-2020թթ. տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ).
3. Տարածքային կառավարման հայեցակարգի նախագիծ.
4. <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի նախագիծ.
5. «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ն միացվել է Գյումրու ԲԿ-ին (ՀՀ կառավարության 25.05.2017թ. N 573-Ա որոշում):
6. Օպտիմալացվել են Աշտարակի ԲԿ-ն, Ծաղկահովիտի ԲԿ-ն, Մեծ Պառնիի ԱԿ-ն, ինչպես նաև դադարեցվել է ՈՒշիի ԱԱՊԿ-ի գործունեությունը, որի սպասարկման տարածքը վերապահվել է Կարբիի ԱԱՊԿ-ին (ՀՀ կառավարության 10.08.2017թ. N 958-Ն որոշում):
7. Զովաշենի հիմնական դպրոցը միացվել է Հատիսի միջնական դպրոցին (ՀՀ կառավարության 24.08.2017թ. N1036-Ա որոշում):
8. Փյունիկի միջնակարդ դպրոցը միացվել է Արտավազի միջնակարգ դպրոցին (ՀՀ կառավարության 24.08.2017թ. N 1039-Ա որոշում):
9. Փարաքարի հիմնական դպրոցը Փարաքարի միջնակարգ դպրոցի հետ (ՀՀ կառավարության 24.08.2017թ. N1051-Ա որոշում):

2.2. *Մարզերի տնտեսական զարգացման կարողությունների ամրապնդում*

ՀՀ մարզպետարանների զարգացման ծրագրերի գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներին վերապահվել են նաև զբոսաշրջության բնագավառի գործառույթները (ՀՀ կառավարության 05. 10. 2017թ-ի N 1233-Ն որոշում): Նշված ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցների համար կազմակերպվել են վերապատրաստման 3 դասընթացներ՝ մարզի ռազմավարական փաստաթղթերի, ինչպես նաև զարգացման ծրագրերի մշակման կարողություններն ու հմտությունները կատարելագործելու նպատակով: Սկիզբ ենք դրել մարզերի խոշորացված և խոշոր համայնքներում տնտեսական զարգացման պատասխանատուների համակարգի ներդրմանը, որի շրջանակներում արդեն իսկ ընտրվել են շուրջ 80 պատասխանատուներ: Գործընթացը շարունակվում է, առաջիկայում նախատեսվում է իրականացնել համայնքների տնտեսական պատասխանատուների վերապատրաստում:

2.3. *Համայնքների տեղեկատվական բազա*

Նախարարության կողմից ստեղծված համայնքների տեղեկատվական բազայի հարցաշարերը հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են, որոնցում հաշվի են առնվել հանրապետությունում ընթացող վարչատարածքային բարեփոխումների (համայնքների խոշորացումներ) ազդեցությունը: Լրամշակված հարցաշարերով իրականացվել են տեղեկատվության պիլոտային հավաքագրում, որի արդյունքներով իրականացվում է հարցաշարերի շտկման գործընթացը:

2.4. Սահմանամերձ համայնքներին տրամադրվող սոցիալական աջակցություն

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով հատկացվել է շուրջ 928 մլն դրամ, որի շրջանակներում սոցիալական աջակցություն է տրամադրվել սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընտանիքներին՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով: Սոցիալական աջակցությունը տրամադրվել է ընդհանուր առմամբ 16 համայնքի 37 բնակավայրերի ընտանիքներին (ՀՀ Արարատի մարզ՝ 2 համայնք, 3 բնակավայր, ՀՀ Գեղարքունիքի մարզ 1 համայնք, 2 բնակավայր, ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 2 համայնք, 5 բնակավայր և ՀՀ Տավուշի մարզ՝ 11 համայնք, 27 բնակավայր):

2.5. Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 7-13 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպում

Կազմակերպվել է ՀՀ մարզերից, ԼՂՀ-ից և Ջավախքից դպրոցահասակ 7-13 տարեկան 4500 երեխաների ամառային հանգիստը ՀՀ Կոտայքի մարզի ճամբարներում՝ երեք հերթափոխով, 20-ական օրով:

2.6. Տարածաշրջանային զարգացման ծրագրեր

ԵՄ-ի հետ համագործակցության արդյունքում իրականացվում են 8 տարածաշրջանային զարգացման պիլոտային ծրագրեր:

1. Ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը (1,340,995 ԵՎՐՈ, <<Շեն>> ՀԿ, Գեղարքունիքում (Գեղամասար, Արեգունի, Փամբակ) և Սյունիքում (Շաղատ, Անգեղակոթ, Շաքի)): Հիմնական ենթակառուցվածքային տարրերն են՝ ոռոգման ցանցերի վերանորոգումը, ժամանակակից գյուղ. տեխնիկայի տրամադրումը, արտադրության / վերամշակման հարմարությունների ստեղծումը, կաթի ավտոմատ ստացման կայանի ստեղծումը և շինարարությունը / կենսագազի գործարանի արդիականացումը, ջերմոցների կառուցումը:
2. Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում (750,000 ԵՎՐՈ, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան հիմնադրամ): Ծրագրի նպատակն է՝ ստեղծել զբաղվածության հնարավորություններ երիտասարդ գործազուրկ բնակչության կարողությունների զարգացման միջոցով, ընդլայնել մարզում առկա SS ընկերությունների գործունեությունը ընկերությունների վերապատրաստման միջոցով, և ավելի լավ դիրքավորել տեղական և միջազգային շուկաներում և ստեղծել նոր SS ընկերություններ:
3. Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը, որպես հիմնական նախապայման տեղական /տարածաշրջանային տնտեսական զարգացման համար (1,604,808 ԵՎՐՈ, «Հայաստանի փոքր և միջին

ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» Լոռու, Սյունիքի, Արմավիրի): Ծրագրով նախատեսվում են՝ Ճամփեզրի կայանի ստեղծում Լոռու մարզում, որպես մարքեթինգային ենթակառուցվածքներ տեղական արտադրանքի և ծառայությունների համար, ձեռնարկատիրության խթանում, մասնավորապես՝

- <<Հաջող սկիզբ>> սկսնակ գործարարների խթանման արշավներ:
- Ենթադրամաշնորհների տրամադրում կայուն նոր աշխատատեղերի համար և այլն:

4. Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում (749,963.55 ԵՎՐՈ, Կապանի համայնքապետարան): Ծրագրով նախատեսվում են՝

- Գործառնական տարածքների պատրաստում՝ սկսնակ ձեռնարկությունների տեղավորման համար;
- Սկսնակ ձեռնարկություններում անհրաժեշտ սարքավորումների, արտադրության գծի գնում և ներդնում, շինարարական նյութերի արտադրություն.
- Թիրախային համայնքներին և թափոնների կառավարման ձեռնարկություններին անհրաժեշտ սարքավորումներով և այլ ենթակառուցվածքներով ապահովում.

5. Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն (1,194,890 ԵՎՐՈ, <<ԻԴԵԱ>> Հիմնադրամ) Ծրագրի նպատակներն են՝

- Դիլիջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի ստեղծում:
- Արվեստի և արհեստի կենտրոնի ստեղծում Դիլիջանում և պիլոտային դասընթացների մշակում Թեղուտի, Հաղարծինի և Գոշի տարածքներում:
- Քաղաքային շուկայի ստեղծում Դիլիջանում և պիլոտային գյուղատնտեսական տաղավարների ստեղծում Դիլիջանի, Թեղուտի և Հաղարծինի միջհամայնքային ճանապարհների վրա՝ հիմնված վերջիններիս զբոսաշրջային գրավչությունների վրա:

6. ՓՄՁ մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով (2,084,951.71 ԵՎՐՈ, Ֆլորենցիայի համալսարանի Իտալական ուսումնահետազոտական կազմակերպություն):

Ծրագիրը կաջակցի ՓՄՁ-ներին ներկայացնել արևային էներգիայի տեխնոլոգիաները էներգախնայողության մեթոդների հետ միասին, կառուցել փորձնական արևային էներգիայի կայան՝ 1 Մվտ հզորությամբ, բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը կայուն էներգիայի պրակտիկայի վերաբերյալ և տարածաշրջանում ամրապնդել ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները՝ մշակելու և իրականացնելու համար էներգաարդյունավետ և խնայողական միջոցառումներ:

7. Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում (1,626,333.33 ԵՎՐՈ, «Աջակցություն Նոյեմբերյանին» ՀԿ): Ծրագրով նախատեսվում են՝

- Կաթի մթերման գործարանի կառուցում և պանրի արտադրման համար անհրաժեշտ սարքավորումների գնում:
- Բարձր ցեղի անասունների գնում՝ Հոլշտեյն ցեղատեսակի կովեր, Ռոմանով ցեղատեսակի ոչխարներ:
- ՓՄՁ-ների և աշխատանք փնտրողների համար դասընթացներ և խորհրդատվություն:
- Դրամաշնորհային ծրագիր գործազուրկների համար նոր աշխատատեղերի և նոր որակյալ աշխատատեղերի ստեղծման համար և այլն:

8. Ամասիայում բրդյա թելերի և կտորի արտադրություն (549 819,00 ԵՎՐՈ, Ամասիայի համայնքապետարան, <<Մարդը կարիքի մեջ>> ՀԿ) Տարածաշրջանի ընդհանուր հզորությունը տարեկան 25 տ, որին գործարանը կհասնի գործունեության 3-4 տարում: Կստացվի 1,5 տ. գառան բրդի թել, 4տ. ոչխարի բրդի թել, 500 կգ բարձրակարգ կտոր: Գառան բրդի թելը կօգտագործվի գործող և ստեղծվող փոքր ընկերությունների կողմից՝ պայուսակներ, հուշանվերներ, խաղալիքների և այլնի արտադրության համար: Ներկայումս նշված թելը ներկրվում է Թուրքիայից: Ոչխարի բրդի թելը կօգտագործվի կարպետագործության, թաղիքագործության և գորգագործության մեջ:

2.7. <<Ինտեգրված աջակցություն գյուղական տարածքների զարգացմանը>> Համայնքների դիմակայության ամրապնդում>> ծրագիր

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Տավուշի մարզում և գործելու է մինչև 2020 թվականը: 2017 թվականի ընթացքում ավարտվել են հետևյալ աշխատանքները՝ 44 ջերմոցի, գինու փոքրածավալ 9 արտադրամասի, չրի 8 արտադրության, գյուղմեխանիզացիայի 2 հավաքակայանի, 2 հավաքման կետի/սառնարանային տնտեսության/ալրաղացի կառուցում, 28,4 հա պտղատու այգու հիմնում, համայնքային 3 ենթակառուցվածքի ստեղծում՝ Փողոցային ԼԱԴ լուսավորություն 2 գյուղում (Կոթի, Այգեձոր), ոռոգման մայր ջրագծի մասնակի վերանորոգում Ներքին Կարմիրաղբյուրում և այլն:

2.8. <<Գյուղական զբոսաշրջության ինտեգրացված զարգացում>> ծրագիր

Ծրագիրն իրականացվում է 60 գյուղական բնակավայրերում՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծմամբ և զարգացմամբ գյուղական համայնքների բնակիչների համար լրացուցիչ կայուն եկամուտ ապահովվող հնարավորություններ ստեղծելու նպատակով: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ստեղծվել է Իջևանի տուրիստական հետազոտական կենտրոնը, որի նպատակն է մարզի զբոսաշրջային կարողությունների բացահայտումը և առաջմղումը:

2.9. Հրատապ խնդիրների լուծման ծրագրեր

Մարզերում հրատապ խնդիրների լուծման նպատակով վերջիններիս է հատկացվել 5 մլրդ դրամ՝ շուրջ 285 ծրագրերի իրականացման համար: Հատկացված գումարները հիմնականում ուղղվել են դպրոցների, բազմաբնակարան շենքերի տանիքների, ջրագծերի վերանորոգումներին, ինչպես նաև տարբեր ծրագրերի իրականացման համար համայնքների

կողմից համաֆինանսավորումների իրականացմանը: Ծրագրերի իրականացման շրջանակներում խնայվել է 1,465 մլրդ. դրամ:

2.10. Ջերմուկը, որպես տարածքային զարգացման աճի բևեռ

<<Ջերմուկ համայնքը՝ տարածքային զարգացման աճի բևեռ>> ծրագրի ֆինանսավորման համար հատկացվել է 1,190 մլրդ. դրամ գումար, որի շրջանակներում իրականացվելու են 6 ենթածրագրեր, որոնք ուղղված են բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգմանը, փողոցների ջրահեռացման ցանցի վերականգնմանը և ասֆալտապատմանը, բակերի բարեկարգմանը, խաղահրապարակների կառուցմանն ու վերակառուցմանը, ինչպես նաև համայնքի զբոսայգու բարեկարգմանը:

3. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1. Վարչական վերահսկողություն

Հսկողություն է սահմանվել համայնքներում 2003-2016թթ համայնքների ղեկավարների, աշխատակազմերի աշխատակիցների, համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների ամենամյա չօգտագործված արձակուրդները տրամադրելու նկատմամբ (մարվել է շուրջ 157351,2 հազ. դրամ գումար):

ՀՀ մարզպետարանների և համայնքների ենթակայության գործող մարզադպրոցների վերաբերյալ իրականացվել է տեղեկատվության հավաքագրում, ամփոփում և վերլուծություն: Մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ մարզադպրոցների կառավարման և գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Մշակվել և իրականացվել է բակային սպորտի զարգացման ծրագիրը, որի արդյունքում համայնքներում տեղադրվել են մարզասարքեր, կառուցվել և վերանորոգվել են խաղահրապարակներ (շուրջ 50 համայնք՝ օր. Կապան, Մեծամոր, Նոյեմբերյան, Վանաձոր, Բերդավան և այլն):

3.3. Համայնքային ծառայողների վերապատրաստում

Վերապատրաստվել են մարզերի համայնքների աշխատակազմերի թվով 278 և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի թվով 561 համայնքային ծառայողներ, որոնց տրվել են ավարտական փաստաթղթեր՝ վկայականներ:

3.4. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերի հաստատում

Փոփոխություն է կատարվել թվով 19 համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում: Հաստատվել են թվով 34 խաշորացված համայնքների համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերը, որի արդյունքում հաստիքների թվաքանակի տարբերությունը կազմել է 1200 հաստիքային միավոր, իսկ աշխատակազմերի աշխատավարձի ֆոնդի տարեկան տնտեսումը կազմել է 1.194.308,9 հազ. դրամ:

3.5. Մեթոդական ուղեցույց

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել <<Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքի հաստատման, հաստիքացուցակի կազմման, պաշոնային դրույքաչափերի համամասնության սահմանման>> մեթոդական ուղեցույցը, որով սահմանվել են՝ համայնքի ավագանու որոշման, ինչպես նաև հաստիքացուցակների միատեսակ և օրինակելի ձև, հայեցողական պաշտոնների օպտիմալ թվաքանակ՝ համայնքի բնակչության թվաքանակից կախված: Առաջարկվել է նախատեսել աշխատակազմի հաստիքների պաշտոնային այնպիսի դրույքաչափեր, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի սեփական եկամուտները:

3.6. Մանկապարտեզների ֆինանսական կառավարման արդյունավետություն

Իրականցվել է ՀՀ մարզերում գործող 508 մանկապարտեզների բյուջեների վերլուծություն, որի արդյունքում համայնքների ղեկավարներին ներկայացվել են միջինացված ծախսերի առաջարկություններ սննդի, հաստիքների և այլ գործառույթների մասով: Առաջարկ է ներկայացվել խմբավորել առանձին ՀՈԱԿ-ներ:

3.7. Դպրոցների ֆինանսական կառավարման արդյունավետություն

ՀՀ մարզերում գործող 1084 դպրոցների ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է դպրոցների ֆինանսավորումը իրականացնել դպրոցների նախապես ներկայացվող հայտերի և դրանց քննարկման արդյունքի հիման վրա: Փոքր դպրոցների ֆինանսավորման համար նոր մոտեցում մշակել, որը հիմնված կլինի ոչ թե աշակերտների քանակի վրա, այլ դպրոցի պահպանման համար գումարի (հաշվի առնելով և բարձրացնելով գործակիցները լեռնայնությունից կախված) և անձնակազմի քանակի վրա, հաշվի առնելով առկա նորմատիվները ոչ ուսուցչական անձնակազմի համար:

4. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

4.1. Մարզային ներդրումային/գործառնական ծրագրեր

1) ՀՀ համայնքներում տնտեսական և սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Որոշմամբ սահմանվում է համայնքների ղեկավարների կողմից 2018 թվականի ընթացքում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ ստանալու նպատակով ծրագրային հայտերի ներկայացման և համայնքներին սուբվենցիայի տեսքով միջոցների հատկացման ընթացակարգը, որի համաձայն համայնքներին

հնարավորություն է ընձեռվում համայնքի բյուջեի ֆոնդային մասից կապիտալ ծախսերին ուղղվող միջոցներն ավելացնել պետական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքների կողմից կապիտալ բնույթի ծախսերի համար ավելի մեծ միջոցների նախատեսման խրախուսմամբ՝ ակնկալվում է բարձրացնել տեղական բյուջեների կառավարման արդյունավետությունը:

2) ՀՀ մարզերում գործարար ակտիվության խթանման, տնտեսության կայունության, համաչափ տարածքային զարգացման ու հետագա տնտեսական աճի ապահովման նպատակով՝ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման ընթացակարգը», որով նախատեսվում է իրականացնել ներդրումային և գործարար ծրագրերի առավել ընդգրկուն և բազմագործոն գնահատում, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի ավելի իրատեսական և արդյունավետ ծրագրերի իրագործման համար ցուցաբերել պետական աջակցություն՝ ծրագրերի վարկային բաղադրիչների սուբսիդավորման միջոցով: Ընդ որում, ընթացակարգով նախատեսվում է ներդրումային և գործարար ծրագրերի բազմագործոն գնահատումն իրականացնել միջգերատեսչական հանձնաժողովի կողմից՝ կիրառելով ծրագրերի ընդգրկուն գնահատում ելնելով՝ ծրագրի ոլորտից, դրա իրականացման աշխարհագրական դիրքից, համաֆինանսավորման չափից, ստեղծվող հիմնական աշխատատեղերի քանակից և արտադրանքի արտահանման չափերից:

3) ՀՀ մարզերում և համայնքներում ձևավորված ներդրումային ծրագրերի մշակման և ներկայացման գործընթացների արդյունքներով 2017 թվականի ընթացքում ՀՀ մարզերի, այլ գերատեսչությունների և մասնավոր ներդրողների կողմից նախարարություն են ներկայացվել թվով 180 ներդրումային/գործառնական ծրագիր՝ տարբեր ոլորտներում ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով: Թվով 127 ծրագիր հստակեցվել, ներդրողների հետ քննարկվել ու միատեսակ ձևաչափով ներկայացվել են ՀՀ վարչապետի հարթակ: ՀՀ վարչապետի մոտ քննարկված ծրագրերից հավանության են արժանացել թվով 58 ծրագիր: Մի շարք ծրագրերի հեղինակներ հրաժարվել են առաջարկվող տոկոսադրույքով տրամադրող վարկից, որոշ ներդրողներ ակնկալում են միայն դրամաշնորհ, որոշ ներդրողների մոտ չկա ազատ գրավի առարկա, կամ չի համապատասխանում վարկավորման գործընթացի պահանջներին: Արդյունքում 2017թ. ընթացքում 20 ներդրումային ծրագիր ֆինանսավորվել է 638,355 մլն ՀՀ դրամ վարկային միջոցներով՝ 10-12% տոկոսադրույքով: Ընդ որում երեք ծրագրերի համար նախատեսվում է վարկի առաջին 2 տարվա համար սուբսիդավորում 3%-ի չափով:

4) ՀՀ մարզերում ներդրումների խթանման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 10-ի N 15 և ՀՀ կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1138-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով ակնկալվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի նախկին Շիրակ հյուրանոցի վթարային շենքի ապամոնտաժումից հետո մնացած շինությունը և դրա սպասարկման համար նախատեսված հողամասը սեփականության իրավունքով տրամադրել «Բասենի Գովք» ՍՊԸ-ին՝ տարածքում հյուրանոցային համալիրի, առևտրային կենտրոնի և սննդի սպասարկման վայրի կառուցման նպատակով: Ընդ որում, որոշմամբ ամրագրվում է ներդրողի կողմից 1,0 մլրդ ՀՀ դրամ ներդրում կատարելու և 100-150 աշխատատեղեր բացելու պարտավորությունը:

5) Մշակվել է «Համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման մեթոդական ուղեցույցը», ինչպես նաև համայնք-մասնավոր գործընկերության պայմանագրերի օրինակելի ձևեր, որոնք տրամադրվել են մարզպետրանաններին և համայնքներին և տեղադրվել նախարարության պաշտոնական կայքում:

6) ՀՀ համայնքներում ընտրվել և նշանակվել են համայնքի տնտեսական զարգացման ծրագրերի պատասխանատուներ: Նշված պատասխանատուների ներգրավմամբ մշակվել են համայնքների տեղական ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր, որոնցից 20-ը արդեն իսկ հավանության են արժանացել և նախատեսվում է դրանց իրականացումը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

7) Բանակցություններ են վարվել ԱԶԲ-ի աջակցությամբ երկրորդային/բևեռային քաղաքների զարգացման ծրագրի իրականացման շուրջ, այդ թվում բևեռային հինգ քաղաքների՝ (Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Սևան և Ծաղկաձոր) ընտրության և ծրագրի իրականացման ժամանակացույցի մասով:

8) Աջակցություն է ցուցաբերվել Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող Սպիտակ և Վայք համայնքներում բազմաբնակարան և հանրային շենքերում էներգաարդյունավետության բարձրացման ծրագրին, այդ թվում համայնքների կողմից ծրագրի ընդհանուր արժեքի 20% համաֆինանսավորման՝ 77,893 մլն ՀՀ դրամից 2017 թվականի տարեվերջի դրությամբ պարտք մնացած շուրջ 16,0 մլն ՀՀ դրամի վճարման հնարավորության հարցերի մասով: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ էներգաարդյունավետության բարելավմանն ուղղված շինաշխատանքներ են իրականացվել Սպիտակի 4 և Վայքի 5 բազմաբնակարան շենքերում, ընթացքի մեջ են Սպիտակի 9 և Վայքի 5 շենքերի շինաշխատանքները: Ծրագրով նախատեսվում է նաև արևային ֆոտովոլտային համակարգեր տեղադրել Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի տանիքին և Վայքի քաղաքապետարանի, մշակույթի տան, թիվ 1 և թիվ 3 մանկապարտեզների տանիքներին: Աշխատանքներ են տարվել էներգաարդյունավետության ծրագրի ընդլայնման և շարունակության ուղղությամբ և համայաձայնություն է ձեռք բերվել իրականացնել այն Արթիկ և Ապարան համայնքներում:

4.2 Կոշտ կենցաղային թափոնների կառավարում

1) Մշակվել և ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 28-ի նիստում հավանության է արժանացել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Թափոնների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով նախատեսվում է կանոնակարգել կենցաղային թափոնների հետ գործածության ոլորտը և պատասխանատվության խստացման դրույթները:

2) Մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի թիվ 13 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը»:

3) Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավման նպատակով նախարարությունը միջոցներ է ձեռնարկել հանրապետության բոլոր բնակավայրերը աղբահանության համակարգում ընդգրկելու, աղբահանության արդյունավետ և ինքնածախսածածկող սխեմաների մշակման ու ներդրման, աղբահանության վարձավճարների հավաքագրման տոկոսի բաձրացման, իրավաբանական անձանց հետ աղբահանության պայմանագրերի կնքման ու դրույքաչափերի հստակեցման, հանրապետության ողջ տարածքում առկա աղբանոցների գույքագրման և թվայնացման և դրանց քանակի կրճատման ու տարածքների ազատման ուղղությամբ:

4) Վերոհիշյալ աշխատանքների արդյունքներով կարելի է փաստել.

- հանրապետության 350 բնակավայրերում իրականացվում են աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ, կամ 2017 թվականի տարեսկզբի համեմատ աղբահանությունիրականացնող համայնքների թիվն աճել է 56 տոկոսով:

- աղբահանության վարձավճարների հավաքագրման <u>19 % աճ</u> է արձանագրվել: 2017 թվականին աղբահանության վճարները հանրապետության մարզերում կազմել է շուրջ 1,812 մլրդ ՀՀ դրամ, որից 1,112 մլրդ ՀՀ դրամը ֆիզիկական անձնացից հավաքագրված գումարներն են, իսկ 700,0 մլն ՀՀ դրամը՝ իրավաբանական անձանցից,

- 2017 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ մարզերում իրավաբանական անձանց հետ կնքվել են թվով 17649 աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրեր: Իրավաբանական անձանց/տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության պայմանագրերի ամսական վճարը միջինացված կազմում է 3,657 ՀՀ դրամ: 2017 թվականի մայիս ամսվա դրությամբ կնքված պայմանագրերի թվի համեմատ (8881)՝ <u>50%-ով</u> աճել է կնքված պայմանագրերի թիվը:

-գույքագրվել և անձնագրավորվել և թվայնացվել են հանրապետության տարածքում առկա 2031 աղբանոցներ՝ ավելի քան 430 հա ընդհանուր տարածքով: Կատարված աշխատանքների արդյունքում 2017 թվականի տարեվերջին մաքրվել կամ կոնսերվացվել են 1622-ը: Նախատեսվում է փակել ևս 108-ը:

-հանրապետության 153 բնակավայրերում գործում են աղբահանության ծառայության մատուցման 33 մասնավոր ընկերություններ: Հարկ է նշել, որ 2017 թվականի մայիս ամսվա դրությամբ մասնավոր ընկերություններ գործել են 124 բնակավայրերում:

- հանրապետության բոլոր համայնքների հաստիքացուցակով մեկ համայնքային ծառայողի վրա դրվել է աղբահանության բնագավառի պարտականություններ:

- կատարված աշխատանքների և վերլուծությունների արդյունքներով՝ նախատեսվում է 2018 թվականին վարձավճարների զգալի աճ՝ իրավաբանական անձանց հետ 2017 թվականի վերջին եռամսյակում կնքված պայմանագրերի և այդ պայմանագրերում սահմանված վարձավճարների հավաքագրման, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից վարձավճարների հավաքագրման տոկոսի ավելացման շնորհիվ: Կանխատեսվում է մոտ 2,86 մլրդ դրամ հավաքագրում՝ այդ թվում ըստ պայմանագրերի թվի և վճարների՝ նախատեսվում է տարեկան մոտ 856,0 մլն ՀՀ դրամ գումարի հավաքագրում և ֆիզիկական անձանց կողմից աղբահանության վարձավճարների 80% հավաքագրման դեպքում՝ 2,0 մլրդ ՀՀ դրամ հավաքագրում:

Դրա հետ մեկտեղ մաթեմատիկական մոդելավորմամբ վերլուծական աշխատանքների արդյունքներով՝ 1 շնչին բաժին ընկնող աղբահանության և սանիտարական մաքրման համար միջին ծախսը կազմում է 1560 ՀՀ դրամ տարեկան՝ 390 դրամ ստադնարտ շեղման հնարավորությամբ: Նշված ցուցանիշը կարող է հիմք հանդիսանալ համայնքային բյուջեների պլանավորման և դրանց կիրարկման համար:

<u>4.3 «Մաքուր Հայաստան» ծրագիր</u>

1) Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարութան 2017 թվականի հուլիսի 20-ի թիվ 31 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Մաքուր Հայաստան» գործողությունների ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը:

2) 2017 թվականին անցկացվել է Հանձնաժողովի 7 նիստ և կազմակերպվել է համապետական երեք շաբաթօրյակ, որոնց ընթացքում ընդհանուր առմամբ մասնակցել են 368334 քաղաքացիներ, 7678 կազմակերպություններ, 3692 մեքենա-մեխանիզմներ և աշխատանքներ կատարվել են շուրջ 7000 առանձնացված և նախապես քարտեզագրված տեղամասերում:

3) Բոլոր մարզերում ստեղծվել են համապատասխան հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, ինչպես նաև գործադիր իշխանության մարմիններում նույնպես նշանակվել են «Մաքուր Հայաստան» ծրագրի պատասխանատուներ:

4) Կատարվել է ընդհանուր առմամբ 515 հեղուկ վառելիքի և գազալցակայանների սանհանգույցների և մշտական խմելու ջրի առկայության և վիճակի ուսումնասիրություն:

5) ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների և տարածքային մարմինների կողմից հայտնաբերվել է չսահմանված վայրերում աղբ թափելու 1959 դեպք, աղբ թափող՝ 974 անձ:

<u>4.4 Տարածաշրջանային աղբավայրերի ստեղծմանն ուղղված ծրագրերի համակարգում</u>

1) Համակարգվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված միջազգային համաձայնագրի համաձայն՝ իրականացման փուլում գտնվող **«Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը»:** Ներկայումս իրականացվում են աղբավայրի կառուցման միջազգային մրցույթ հայտարարելու նախապատրաստական աշխատանքները:

2) ՀՀ կառավարության և Գերմանական զարգացման բանկի (KfW) հետ հակագործակցության շրջանակներում քննարկվել և բանակցություններ են վարվել **ՀՀ Լոռու մարզի և Դիլիջան քաղաքի աղբահանության զարգացման և աղբավայրի կառուցման ծրագրի** իրականացման շուրջ::

3) Իր իրավասությունների շրջանակներում նախարարությունն աջակցել է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման» և **«Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ կենցաղային թափոնների կառավարման լուծումներ»** դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքներին և ընթացքին:

4.5 Աղբահանության ռազմավարական ուղղությունների զարգացում

Կատարվել են վերլուծություններ հանրապետությունում աղբահանության ռազմավարական ուղղությունների կիրառելիության վերաբերյալ՝ աղբավայրերի կառուցման և աղբի վերամշակման՝ կենսաքիմական պրոցեսի հիման վրա աղբի այրման և էլեկտրաէներգիայի ստացման գործարանների կառուցման մասով: Վերլուծությունները ներկայացվել են համապատասխան գերատեսչությունների քննարկմանը, ինչպես նաև ՀՀ կառավարություն: 2017թ. նոյեմբերի 7-ին քննարկվել է ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ: Ներկայումս առաջարկությունը քննարկվում է տեղական և միջազգային փորձագետների հետ, այդ թվում չեխական, ամերիկյան և չինական գործընկերների հետ:

4.6 Դպրոցների սեյսմակայունության բարձրացում

1) Սեյսմիկ անվտանգության տեսակետից բարելավման անհրաժեշտություն ունեցող առաջնահերթ դպրոցների ցանկը հաստատելու նպատակով՝ մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ N 805-Ն որոշմամբ հաստատվել է «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում» ընդգրկված 20 գերակա դպրոցների ցանկը, որոնք ենթակա են առաջնահերթ կարգով ուժեղացման և/կամ նորի կառուցման: Նշված դպրոցներից 7-ը գտնվում են շինարարության փուլում, 1 դպրոցը՝ փորձաքննության փուլում, 3 դպրոցի նախագծանախահաշվային մրցույթը հայտարարվել է, իսկ մնացած 9 դպրոցների փորձաքննությունն արված է, նախապատրաստվում են դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերը:

2) Նախարարության կողմից համակարգվել են նաև սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի առաջին փուլով նախատեսված՝ քանդման ենթակա թվով 5 դպրոցների քանդման աշխատանքները:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

5.1. Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ - իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 4-րդ և տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստերի անցկացում:

5.2. Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովի անցկացում

2017 թվականի հոկտեմբերի 5-7-ը Երևանում տեղի ունեցավ Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովը, որը կազմակերպվել էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարության կողմից: Համաժողովի շրջանակներում քննարկվեցին տարբեր ոլորտներում համագործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր, նպաստել ՀՀ մարզերի և ՌԴ տարածաշրջանների միջև համագործակցության ներուժի բացահայտմանը և նոր կապերի հաստատմանը:

5.3. «Նորարարությունները և տարածքային զարգացումը՝ որպես Արևելյան գործընկերության երկրների աճի գործոններ» միջազգային համաժողովի անցկացում

2017թ. հոկտեմբերի 24-ին Երևանում անցկացվեց Արևելյան գործընկերության տարածքային և տեղական իշխանությունների հանձնաժողովի (CORLEAP)՝ «Նորարարությունները և տարածքային զարգացումը՝ որպես Արևելյան գործընկերության երկրների աճի գործոններ» խորագրով միջազգային համաժողովը, որին մասնակցում էին Արևելյան գործընկերության երկրների ավելի քան 350 պետական, տարածքային և համայնքային պաշտոնյաներ: Համաժողովի ընթացքում Եվրոպական հանձնաժողովը հայտարարեց Արևելյան գործընկերության երկրների «Քաղաքապետերի դաշնագիր» ծրագրի երկրորդ փուլի և «Քաղաքապետերը հանուն տնտեսական զարգացման» նոր նախաձեռնության (M4EG) մասին՝ ուղղված համապատասխանաբար էներգետիկ արդյունավետությանը և գործարար ոլորտին:

6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2017թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ստացվել, մշակվել և «Mulberry» համակարգի միջոցով գրանցվել է 20373 մտից փաստաթուղթ, ելից՝ 8582 գրություն: 2017թ. ընթացքում իրականացվել է քաղաքացիների 13 ընդունելություն, որին մասնակցել է 45 քաղաքացի:

7. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

ՀՀ արխիվային գործի զարգացման նպատակով գործունեություն է ծավալվել ներքոնշյալ հիմնական ուղղություններով.

1. Արխիվում պահպանվող արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով, վերականգնվել-վերանորոգվել է 306.667 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիր 300 000), կարվել-կազմապատվել՝ 29.306 արխիվային գործ (ծրագիր 26 500),:

2. Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվային պահպանության է ընդունվել 12.226 գործ, որից՝ մշտական պահպանության՝ 5.870, անձնակազմին վերաբերող՝ 6.356 գործ: Համալրվել է նաև անձնական ծագման՝ ցրոն վիճակում գտնվող 89.694 թերթ փաստաթուղթ և 8.015 պահպանման միավոր կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, այդ թվում՝ 79 կինո, 1.513 ֆոտո և 6.423 ֆոնո փաստաթուղթ:

3. Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը: Թվայնացվել է 265.490 պատկեր (էջ) թղթե կրիչով փաստաթուղթ (ծրագիր՝ 266.140): Թվայնացվել է նաև 818 պ.մ. կինոֆոտո փաստաթուղթ, որից՝ 170 կինո փաստաթուղթ (խաղարկային, ոչ խաղարկային ֆիլմեր և մուլտֆիլմեր), 648 ֆոտո փաստաթուղթ:

4. 2017թ. ընթացքում պատասխանվել է քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից, ստացված 45.359 հարցման, որը նախորդ տարվանից ավել է 11.555-ով:

5. 2017թ. ընթացքում ՀԱԱ-ն ունեցել է 605 ուսումնասիրող:

6. Հաշվետու տարում նախապատրաստվել և հրապարակվել են փաստաթղթերի 7 ժողովածու, ավարտվել են 4 ժողովածուների պատրաստման աշխատանքները, տպագրվել է <<Բանբեր Հայաստանի արխիվների>> տարեգրքի 2017թ-ի համարը (125), եթեր են հեռարձակվել 57 ռադիոհեռուստահաղորդում:

7. Կազմակերպվել են փաստաթղթերի և նյութերի 4 ցուցադրություն. Ռուսաստանի հայոց թեմի հիմնադրման 300-ամյակին նվիրված փաստաթղթերի ցուցահանդես (ք. Մոսկվա), Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանի ծննդյան 150-ամյակին նվիրված փաստաթղթերի ցուցահանդես (ք. Ստեփանակերտ), <<Հայոց ծխական դպրոցները >> թեմայով ցուցահանդես (Մայր Աթոռ Ս. Էջմիածին), ՀՀ և ՌԴ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին նվիրված ցուցահանդես (ք. Երևան):

8. Հիմնավերանորոգվել է արխիվի գլխավոր մասնաշենքը 3-րդ հարկը (3,5 մլն. դրամ), Լոռու մարզային մասնաճյուղի շենքը (34,5 մլն. դրամ) փոխվել է վարչական մասնաշենքի և 2-րդ արխիվապահոցի տանիքը (6,9 մլն. դրամ), գազաֆիկացվել և ջեռուցման համակարգ է տեղադրվել Շիրակի մարզային մասնաճյուղի շենքում (1,5 մլն. դրամ):

8. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլի կառուցվածքին և ցուցանիշների ցանկին: Ընդլայնված միգրացիոն պրոֆիլի ցուցանիշների ցանկում նշված պետական կառավարման մարմինները ծառայություն են ներկայացրել Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլի 2013-2016 թվականների ցուցանիշները: Սկսած 2018 թվականից, այդ մարմինների կողմից ծառայություն կներկայացվեն նախորդ տարվա ցուցանիշները: ՀՀ ընդլայնված միգրացիոն պրոֆիլը ծառայության կողմից կպատրաստվի և կիրապարակվի սկսած 2019 թվականից՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ:

Ծառայության կողմից ստեղծվել են երկու նոր տեղեկատվական ինտերնետային համակարգեր՝ միգրանտների կողմից կատարվող դրամական փոխանցումները դյուրացնելուն ուղղված www.sendmoneyarmenia.am վեբ-կայքը և http://www.miglib.org/ էլեկտրոնային միգրացիոն գրադարանը: www.sendmoneyarmenia.am կայքը հնարավորություն է տալիս արտերկրում գտնվող մեր միգրանտներին մշտապես թարմացվող արժանահավատ տեղեկություններ ունենալ այդ պետություններից դեպի Հայաստան դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների առաջարկների վերաբերյալ (դրամական փոխանցման վճարի չափը, արագությունը և այդ գործընթացի վերաբերյալ այլ պարամետրեր) և արդյունքում ընտրել իրեն ամենահարմար օպերատորին: Ըստ գնահատականների փոխանցման վճարների միայն 5% կրճատման դեպքում հնարավոր կլինի տնտեսել շուրջ 20 մլն ԱՄՆ դոլար գումար: http://www.miglib.org/ էլեկտրոնային միգրացիոն գրադարանը իրենից ներկայացնում է միգրացիոն հարցերով խիստ համակարգված ընդարձակ տեղեկատվական ռեսուրս և օգտակար կարող է լինել ուսանողների, հետազոտողների և միգրացիոն հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների ու կազմակերպությունների համար:

Ընդունվել է <Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին> ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1417-Ն որոշումը, համաձայն որի՝ ՀՀ-ում ապաստան հայցողներին տրվում է պաշտպանիչ շերտ ունեցող պլաստիկ քարտե վկայական: Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD) հետ վարված բանակցությունների արդյունքում ծառայությանը տրամադրվել է համապատասխան տպիչ սարք, 1.000 օրինակ պլաստիկ քարտ, ինչպես նաև սարքի շահագործման համար անհրաժեշտ ժապավեններ և այլ պարագաներ: Կենտրոնը պատրաստակամություն է հայտնել նաև ծառայությանը տրամադրելու ևս 2.000 օրինակ պլաստիկ քարտ, որը կբավականացնի 3 տարի:

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքային համայնքի կողմից ծառայությանը 2017թ. թվականի սեպտեմբեր ամսին Աբովյան քաղաքում հատկացվել է 2,5 հեկտար հողատարածք՝ նոր հատուկ կացարանի կառուցման նպատակով: Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ԵՄ ծրագրի շրջանակներում մշակվել է ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի ստեղծման նախագծային-նախահաշվային փաստաթուղթը: